

Վ. Ռ. ԴԻԴԻՍԻԱՆ

ՅԱՇ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՂ ՄԻ ՈՒՇԱԳՐԱՎ ՎԱՎԵՐԱԳԻՐ

Ուկրաինական ՍՍՌ Կենտրոնական Պետական պատմական արխիվում, որը գտնվում է Կիև քաղաքում, ի թիվս բազմաթիվ արժեքավոր վավերագրերի, պահվում են նաև Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի նիստերի արձանագրությունները պարունակող մատյանները, որոնք բացառիկ կարևորություն ունեն ուկրաինական այդ հինավուրց քաղաքում հաստատված հայկական համայնքի 16—17-րդ դդ. սոցիալ-տնտեսական, իրավական ու մասամբ էլ քաղաքական պատմությունը վեր հանելու, ինչպես և հայ-լեհական ու հայ-ուկրաինական հարաբերություններն ուսումնասիրելու համար:

Այդ մատյանները սկզբում կազմվել են հայերեն լեզվով, բայց Կամենիցում մեծ թիվ էին կազմում ղփչաղերեն (պոլովցիների լեզվով) խոսող հայերը, ուստի և նրանք վարչական մարմնին պարտադրում են իրենց լեզուն և 1575 թ. սկսած արձանագրությունները կազմվում են ղփչաղերեն լեզվով, բայց հայերեն տառերով: Միաժամանակ հանդիպում ենք նաև լեհերեն ու լատիներեն արված գրությունների՝ դարձյալ հայերեն տառերով: Այնուհետև Կամենիցի հայերը լեզվական մի ուրիշ հեղաշրջում են ապրում՝ ղփչաղախոս սերունդներին փոխարինում են լեհախոս հայեր և 17-րդ դարի կեսերից սկսած մատյանների մեջ լիովին գերիշխում է լեհերեն լեզուն, սկզբում՝ հայերեն, ապա լատիներեն տառերով: Անհրաժեշտ է նշել, որ արձանագրությունների հայատառ ղփչաղերեն կազմված մասը համարվում է այդ վաղուց մեռած լեզվի ուշ շրջանի կարևորագույն հուշարձաններից մեկը աշխարհում:

Գիտության համար խիստ արժեքավոր այդ փաստաթղթերը, որ երկար ժամանակ պահվել են Կամենեց Պոդոլսկում² և Կիև են փոխադրվել 19-րդ դարի կեսերին միայն³, մինչև վերջին ժամանակներս համարվում էին ոչնչացված այն բոլոր նյութերի հետ, որ 1943 թ. աշնանը Կիևից խուճապահար նահանջող գերմանական զավթիչները պայթեցրել ու հրկիղել էին Կիևի համալսարանի շենքի հետ միասին: Այդ կաթիլին են եղել նույն արխիվի վարիչ Վ. Ռոմանովսկին⁴, սովետական թուրքապետ Գ. Գրունին⁵, ֆրանսիացի հայտ-

¹ Большая Советская Энциклопедия, II изд., т. 24, էջ 169:

² Միևս Բժշկյան, Ճանապարհորդություն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, Վենետիկ, 1830, էջ 157:

³ Віктор Романовський, Нариси з архівознавства (Історія архівної справи на Україні та принципи порядкування в архівах), Харків, 1927, էջ 105:

⁴ В. Романовский, Киевский архив древних актов, Институт истории АН СССР, «Исторический журнал», книга 5—6, Москва, 1944, էջ 93:

⁵ Г. И. Грунин, Памятники половецкого языка XVI века, Академику Владимиру Александровичу Гордлевскому к его 75-летию, Сборник статей, Москва, 1953, էջ 91:

նի ղփչաղագետ Ժ. Դրնին⁶, լեհ արևելագետ Մ. Լևիցկին և նրուսաղեմի համալսարանի դասախոս Ռ. Կոհնովան⁷։ Սակայն ոչնչացել կամ անհետ կորել էր ոչ թե հայատառ այդ մատյանների ողջ հավաքածուն, այլ ընդամենը 5 մատյան (32-ից), մնացած 27-ը հայտնաբերվել են գերմանացիների կողմից թալանված և դեպի Գերմանիա ուղարկված արխիվային նյութերի մեջ և վերադարձվել իրենց նախկին տեղը՝ Կիև։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ «Մատենադարանը» կարևոր նշանակություն տալով Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արխիվին, ձեռք է բերել պահպանված բոլոր մատյանների մանրալուսանկարչական պատճենները և տողերիս հեղինակին հանձնարարել ուսումնասիրելու և հրատարակության պատրաստելու արձանագրությունների հայերեն լեզվով կազմված մասը, որն ընդգրկում է առավել վաղ շրջանը՝ 1572—1575 թ.։ Մեր ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ այդ փաստաթղթերը ուղագրավ տեղեկություններ են հաղորդում ոչ միայն Պոդոլյեի ու Գալիցիայի, այլև Մոլդավիայի հայության կյանքի, հայ-մոլդավական առընչակցությունների վերաբերյալ։ Մոլդավիայի առանձին կենտրոնների հետ կամենիցահայության ունեցած տնտեսական-առևտրական կապերի մասին պատմող տեղեկություններից զատ, մատյանները պարունակում են նաև Յաշ քաղաքի հայերեն լեզվով գրված գրություններ, որ հասցեագրված են եղել Կամենիցի հայոց դատարանին և ստացվելուց անմիջապես հետո արտագրվել են ակտային գրքերի մեջ։ Դրանցից առաջինը գրված է 1574 թ. փետրվարի 6-ին, մյուսը՝ ապրիլի ուշ—1614 թ. վերջերին։ Ավելի հետաքրքրական ու արժեքավոր է առաջին գրությունը, որը դատական մի տեղեկանք է և Կամենիցի հայկական դատարանի նիստի արձանագրության մեջ է մտցվել 1574 թ. հուլիսի 13-ին։ Այդ տեղեկանքը, կամ ինչպես նշվում է արձանագրության մեջ՝ «վկայական թուխդ դատարանէն», պատմում է այն մասին, թե ինչպես սեչովցի Տեր-Հանեսի կին Ճաշխաթունը Յաշ քաղաքում հանդիպելով իր պարտապան կամենիցացի Նորսեսի համաքաղաքացի նվիրյին, դատի է տալիս նրան, և իր պարտքը վերցնում նրանից, որպեսզի վերջինս Կամենիցում, իրեն հեղինակություն վայելող մի անձ, կարողանա այդ գումարը ստանալ Նորսեսից։ Վերոհիշյալ դատը գլուխ բերելու համար Ճաշխաթունը գործարքի մեջ է մտնում «Յաշ քաղաքի պարոնի» հետ և ստանալիք պարտքի կեսը խոստանում նրան։

Փաստաթղթի բացառիկ արժեքը կայանում է նախ և առաջ նրանում, որ այն, որքան մեզ հայտնի է, գրավոր առաջին վկայությունն է Ռումինիայի տերիտորիայում հայկական դատարանի գոյության, մի դատարան, որը գլխավոր-

⁶ Jean Deny, L'Arménie-coman et les „Ephemerides“ de Kamientec (1604—1613), Ural-Altische Bibliothek fortsetzung der „Ungarischen bibliothek“, Herausgegeben von Julius farkas und o meljan pritsak, Otto Harrassowitz Wiesbaden, 1957, էջ 16։

⁷ Marian Lewicki, Rehnata Kohnowa, La version turque-kiptchak du Code des lois des Armeniens polonais d'après le ms. 1916 de la Bibliothèque Ossoliteum, Polska Akademia nauk, Komitet orientalistyczny. „Rocznik orientalistyczny, tom XXI, Warszawa, 1957, էջ 91։

րել է Պապ վոյթը⁸ իր «պրկաոններով»⁹ ու «ծերերով» նյութերի պակասության պատճառով առայժմ դժվար է շատ խոսել այդ դատարանի մասին: Տեղեկանքի ժլատ տողերը հնարավորություն են ընձեռում միայն ենթադրելու, որ Յաշի դատարանը ինչ որ չափով նմանություն է ունեցել լեհաստանի տերիտորիայում գործած հայկական դատարանների հետ: Կարծում ենք, որ հետագա պրպտումները կարող են նոր նյութեր վեր հանել այս մասին և պատասխան տալ այն կարևոր հարցին, թե արդյոք Յաշի հայերի մոտ կիրառություն գտել է Սիգիզմունդ 1-ին լեհական թագավորի կողմից 1519 թ. հաստատված օրենսգիրքը, որի հիմքում, ինչպես հայտնի է, ընկած է Մխիթար Գոշի Հայոց դատաստանագիրքը (1184 թ.):

Զափազանց ուշագրավ է, որ տեղեկանքի մեջ Յաշի պարոն, իշխան կամ թագավոր անվանվող Իվոնը ոչ այլ ոք է, եթե ոչ Ռումինիայի և Մոլդավիայի պատմության մեջ նշանակալի դեր խաղացած Մոլդավիայի իշխան Յոանը, որն ավելի հայտնի է Յոան Կոմպլիտ կամ Յոան Արմյանուլ մականուններով: Դրանցից առաջինը նա ստացել էր կենտրոնախույս ուժերի և օտարերկրյա թշնամիների դեմ մղած համառ ու անզիջում պայքարի համար, իսկ երկրորդը՝ այն պատճառով, որ հարազատ մայրը հայ էր, անունը Սերպեդա¹⁰:

Մեր այս փաստաթուղթը արժեքավոր վկայություն է նաև այն բանի, որ Յոան Կոմպլիտը կապված է եղել Յաշի հայկական դադութի հետ և, ինչպես կտեսնենք, պաշտպան, է կանգնել այդ հայ կնոջը՝ Ճաշխաթունին:

Փաստաթղթի արժանիքներից մեկն էլ այն է, որ կարելի է նրանով մի բրոշ գաղափար կազմել Յաշի հայկական գաղութում կնոջ ունեցած հասարակական դիրքի վերաբերյալ:

Փաստաթղթի հեղինակը ձգտել է գրել գրաբարով, բայց դա նրան լիովին չի հաջողվել և մեր լեզվաբանները կարող են օգտագործել նրա գրությունը՝ որպես Յաշի հայության առօրյա-խոսակցական լեզվի մի նմուշ:

Մտորև բերվող արձանագրությունը քաղված է Ուկրաինական ՍՍՌ Կենտրոնական Պետական պատմական արխիվի № 39 ֆոնդի, № 8 գործից (էջ 61ա) (Центральный Государственный Исторический архив Украинской ССР, ф. 39, оп. 1, ед. хр. 8, стр. 61).

⁸ Փաստաթղթի մեջ այդպես էլ գրված է՝ «Այս թուխթ վկայական ի Յասին քաղաքն ի տէր Պապ վոյթին դատաւորութեան»: «վոյթ» բառը, որ հայոց լեզվի մեջ է մտել լեհերենից (wojt կամ woit — ավագ, ղեկավար), շատ տարածված էր լեհաստանի հայերի մոտ և նշանակում էր հայկական համայնքի ինքնավարությունն իրագործող հիմնարկության-դատարանի (կամ մագիստրատի) ղեկավար կամ ղլխավոր դատավոր: Կամեննիցի հայոց վոյթների մասին երբեմն հանդիպում ենք «namiesnik woit» արտահայտությանը (տես՝ Архив Юго-западной России, ч. V, Акты о городах (1432—1799), т. 1, Киев, 1869, էջ 151), Մ. Բժշկյանը գրում է «իշխան-պետ վոյթ անուամբ» (Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, էջ 116), Ժ. Դընին թարգմանում է «maire» — քաղաքապետ (Larmeno-coman et les «Ephemerides» de Kamienec (1604—1613), էջ 29): Այս տեղեկանքը վկայում է, որ Յաշ քաղաքի հայերն էլ ունեցել են իրենց ավագը, ղեկավարը, որին անվանել են ճիշտ այնպես, ինչպես լեհահայերը՝ «վոյթ»:

⁹ Այս բառը հայերը վերցրել են ռումիներենից («Pargri» — գալիս է գերմանական «Burger»-ից — քաղաքային վարչության խորհրդակցական): Ղ. Ալիշանը բացատրում է «իշխանաւոր կամ հոգացող» (տես Կամեննից, Վենետիկ, 1896, էջ 22):

¹⁰ Ղ. Ալիշան, Կամեննից, էջ Թ:

Հայոց թվ. ՌԻԳ (1574), Յուլիսի ԺԳ (13), օրն շորեքշաբթի: Ի Տեմեան վոյթին առջևն և իւր դատաւորացն՝ Միխնոյ, Սարգիս, Գրիգոր, Գասպար, Զանու, Եազուպ և այլքն:

Ի յայս աւուր դատաստանին առջևն եկաց յերես Բնդ Երեքո էրէցփոխանն և դանկատ առաւ Նորսէսին վերայ Երեսփոխանին որ[դ]ոյ թէ ևս կերթայի պազրկանութիւն վասն իմ պիտոյից համար և յորժամ եկայ ի Յասն նա, կին ոմն անուն Ճաշխաթուն տէր Հանէսին կինն սեչուցի, արզելեց զիս և կոչեց ի պարոնն՝ վասն այն պարտուց համար, զոր պարտ էր ողորմած հոգի Գրիգոր Երեսփոխանն: Եւ այն կինն ի յայս դատաստանին առջևն դատաստան կոչել էր զՆորսէսն Երեսփոխանին որդին՝ վասն իւրոյ հայրն պարտուց համար, զոր և կա գրեալ ի դատաստանն: Եւ երբ եկա ի պարոնն, նա հրամանք առաւ ինծի վճառել, զոր և ճառ ուրիշ չգտայ և վճարեցի զայն պարտսն ուր և ձեռնագիրն այլ ունիմ և վկայական թուխդ դատաստանէն՝ որպէս վճառել եմ:

Ուր և Եցոյց Երեքո Երեսփոխանն զայն վկայական թուխդն ի դատաստանին առջևն:

Զոր դատաստանն վերոյգրեալ, լսելով զդանկատն Երեքոյին և ետուն կարգալ զայն թուխդն վկայական, զոր Եցոյց Երեքոն ի {3}ասին դատաստանէն, որ է այսպէս.

«Այս է թուխթ վկայական ի Յասին քաղաքն ի տէր Պապ վոյթին դատաւորութեան, ինչպէս օր եկաւ սեչուցի տէր Հանէսին կինն ի Յասն և տաւի առաւ զԵրեքո էրէցփոխանն Կամէնիցէն Բուն պարոնին առջևն և ասաց թէ,— Թաղաւոր, Կամէնիցէն Ա (1) մարդ Ներսէս անուն ինծի ԳՃ (300) մաճրի պարտի ու զաբիս ունիմ ու ևս կնիկ արմատ գլխովս մինչ Գ (3) անկամ արապա վարձել եմ ու ի Կամէնիցն գնացել եմ և զիմ ապրանքս տաւի եմ արել քաղաքին դատաւորացն առջևն և այս աղէկ մարդոյս առջևն, զէրա այս աղէկ մարդս այլ Կամէնից քաղաքն հայոց ազգին մէջ առաջ ու գլուխ է դատաւորաց և տանուտրաց: Երբ աստուած զայս աղէկ մարդս ի հոս Երեքո նա, այնպէս կու խնդրեմ զքո հրամանքս թաղաւոր, որ դատաստան և իրաւունք ունենամ առաջի բո թաղաւորութեանդ օր այս մարդս ինծի վճարք անէ և Երթայ ի Կամէնիցն ու Ներսէսէն, զինչ օր Ներսէսն ինծի սալով է: Զէրայ ևս այլ չեմ կարել Երթալու ի Կամէնիցն, զէրա չունիմ ինչով երթալու:

Նա Բուն պարոնն Եւա և այնպէս առաւ, օր Երեքո էրէցփոխանն կամ այն կինարմատին ԳՃ (300) ֆլորին տա, կամ երթա ի Կամէնիցն զՆերսէսն բերէ և այս կնոջս ձեռն տա:

Յետոյ տեսաւ Երեքո Երեսփոխանն, թէ յանն ինչպէս է նա խնդրեց զԱսին քաղաքին աղեկ մարդիքն օր մէջ, մտան և խնդիրք առին այն կնոջէն օր Ճ (100) մաճրի վերայ թողու օր իրեն վճար անէ: Նա Եւա այն կինն և ասաց, թէ ես չեմ կառնալ ԳՃ (300)-էն պակաս թողելու՝ զէրա զկէսն պարոնին խոստացել եմ, զնա ի պարոնէն խնդրէ թէ պարոն թողու նա յիսնէ այլ թողած է:

Այնոր հետե ելաւ Երեքոն և երետ Ա (1) դօլենցքի տամղաճուն օր պարոնին ի արեւստ լինա և Ա (1) դօլենցքի տարաւ պարոնին և խնդրեց զպարոնն, նա պարոնն պոչ առաւ և ասաց, թէ զնա խնդրէ այն կնկնէն ինչի վերայ քթեղ թողու նա վճառել ու զաբիսն ի ձեռացն առ: Նա Եւա Երեքոն և զայն Ճ (100) մաճրին, որն մէք խնդրել էաք, և ուր այս կնկանն ու զաբիսն էառ ի ձե-

ռաջն և այլ տվել է Դ (4) տասդա դանակ հոսորովին օր դայն կինն կու դալց-
ներ:

Գիտություն լինի ձեր հրամանուցն կամինից քաղաքի դատաւորաք օր ևս
տէր Պապ վոյթս իմ պրկառներովս և իմ ծերերովս այսպէս գիտեմք և այսպէս
կու վկայեմք մեր հոգւովն որ Բւրքո երեցփոխանին տաւին և վճառն այսպէս է
եղել:

Գրեցաւ թվ. ՌԻԳ (1574), փետր. 2 (6)»:

Յետ այս վկայական թղթին ասաց Բւրքո երեսփոխանն վասն իւր խարճին
համար որչափ առել է յորժամ ժամանակն իցէ նա, կամիմ խօսելոյ:

Եւ ընդդէմ այսմ բանին ճուար հայցեմ նորսէսն: Եւ նորսէսն ճուար ետուր
և ասաց թէ ի մէջ այսմ բանի դատաստան եղել է ի հետ այն կնոջն, զոր ի
պարունէն այսպէս դատաստան եղաւ, զի ևս երդվնայի ընդդէմ այն կնկանն
և կինն խայիլ չեղաւ այն դատաստանին և ոչ կամեցաւ բաւական առնել և
ելաւ դնաց և յետոյ ես այլ պատրաստ բաւական առնել ընդդէմ կնկանն և
նա չուղաց:

Եւ դատաստանն վերոյգրեալ, լսելով Բ (2) կողմն զխօսքն և ի միտ էառ և
առին իւրեանց օր մինչև ի դալ դատաստանն, զի վճիր հատցեն վերոյգրեալ
ամանց մէջ

Զոր Բ (2) կողմն այլ ընդունեց: